իւանիստական ու մենչելիկող իդեալիստական աղավազումների գեմ: Փամանակն ու տարածությունը վորպիս մատերիայի գոյության որյեկտիվ ձևեր: Փամանակի և տարածության պրոբլեմը փիլիսոփայության ու գիտության պատմության մեջ: Բացարձակ տարածության և ժամանակի գաղափարը Նյուտոնի ուսումունքի մեջ: Փամանակն ու տարածությունը Այնշտայնի հարաբերականության թեորիայի մեջ: Այդ թեորիայի իդեալիստական մեկնաբանումը: Ենդելսի պայքարը ազնուսացիզմի գեմ տարածության և ժամանակի հարցում: Փամանակի և տարածության հարցում մախիստների իդեալիստական հայտցքների քննադատությունը լենինի կողմից: Նորկանտականների, Նիցշի, Բերգոսոնի ու եներգիան իդեալիստական հայտցքների, քննադատությունը շարժման, ժամանակի և տարածության հարցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձ. Են գելս. — Անտի-Դյուրինգ. էջ՝ 59—60, 80—81. Բնության դիալիզմիկա, էջ՝ 124—129, 132—133 20—22, 52, 17—18, 26, 303—323, 151—155:

Վ. Ի. Լենին. — Յերկերի ժողովածու, հատոր 13-րդ, գլուխ 3-րդ, պարագրաֆ 1, 4, 5, գլուխ 5-րդ, պարագրաֆ 1, 2, 3, 8. В. И. Ленин. — Философские тетради, стр. 138, 139, 267, 268.

Թեժա 9-րդ. ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ԱՐՏԱՑՈՂՄԱՆ ԹԵՌՈՒՄՆ

Որյեկտիվ նյութական մատերիական աշխարհի գոյության և մարդկային գլխում նրա արտացոլման ընդունումը վորպիս հիմք մարքս-լենինյան իմացարանության: Մատածողությունն ու գիտակցությունը մարդկային ուղեղի արդյունքներ են: Սուրյեկտիվ և որյեկտիվ միասնությունը գիտելիկությունն իմացության պրոցեսում պատմական պրակտիկայի հիման վրա: Գոյյի և մտածողության իդեալիստական ու գունիկ մատերիալիստական նույնացման քննադատությունը:

Զգայությունը վորպիս որյեկտիվ աշխարհի ճանաչման աղբյուր: Զգայությունը վորպիս հետևանք զգայական որգանների վրա արտաքին աշխարհի ներգործության: Հելմոլցի, Սեչենովի, Պելիտանովի հերուղիվական թեորիայի քննադատությունը:

Զգայություններից մտածողության, անմիջական իմացությունից միջնորդված իմացության անցնելու դիալեկտիկան, «կենդանի հայցողությունից զեպի վերացական մտածողությունը և այժմեղից զեպի պրակտիկան» (Լենին): Աշխատանքի դերը մարդու ձեավորման պրոցեսում: Մասի ուսմունքը լեզվի մասին ու խոսքի, լեզվի և մտածողության պրոբլեմը: Այժմյան հոգեբանությունը (Քյոլեր, Կոֆֆկ և այլն) և նրա հիմնական պրոբլեմները. մտածողություն և խոսք, որբազ և առարկա, մարդանման կապիկների ինտելլիկտի հետազոտություն, յերեխայի հասկացողությունների զարգացման պրոբլեմը և այլն արտացոլման մարքսինինյան թեորիայի տեսանկյունով:

Զգայական և ռացիոնալ մոմենտների միասնությունը մարդկային իմացության մեջ: Զգայական և ռացիոնալ իմացության խզումը իրարից եմպիրիկների և ռացիոնալիստների կողմից: Դիտական արստրակցիաների նշանակությունը իմացության մեջ: Լենինը գիտական արստրակցիաների (արժեքի որենք, բնության որենքներ և այլն) մասին: Կոնկրետի և վերացականի միասնությունը իմացության պրոցեսում: Պրակտիկան վորպես իմացության հիմք, վորպես ճշմարտության չափանիշ: Լենինի պայքարը մախիստների դեմ: Պայքարը թեորիայի և ոլրակտիկայի մենշենիկող իդեալիստական անջատման և բողդանովյանությարինյան «պրակտիստիայի» դեմ:

«Խնդին իրերը», մեր իմացության աղբյուր համադիսացաղ արտաքին աշխարհը ժխտող նորկանտականների սուբյեկտիվիտեալիստական հայցքների քննադատությունը: Նորկանտականների ազնոսակցիզմը և մետաֆիզիկական ռելյատիվիզմը:

Որբեկտիվ, բացարձակ և հարաբերական ճշմարտություն: Ընդունել արտաքին աշխարհի, որյեկտիվաշխարհի գոյությունը, նշանակում և ընդունել որյեկտիվ ճշմարտություն: Բացարձակության և հարաբերականության մոմենտների միասնությունը իմացության մեջ. «ճշմարտություն չա» (Լենին): Մախիստական, բողդանովյան ռելյատիվիզմի և մետաֆիզիկական դոգմատիզմի քննադատությունը լենինի կողմից ճշմարտության հարցում:

Կ. Մարքս, — Կապիտալ, հատ. 1-ին, առաջին հրատարակության Առաջարանը:

Վ. Ի. Լենին.— Հատոր 13-րդ, էջ՝ 80, 306—307:

Ֆ. Ենգելս.— Անտի-Դյուրինգ, էջ՝ 51, 111—122, 48, 49, 52—56:

Ֆ. Ենգելս.— Բնության դիալեկտիկա, էջ՝ 117—118, 79—93, 53—54, 129—132, 59—60, 156, 13, 63—64, 158—159:

Վ. Ի. Լենին.— Հատոր 13-րդ, գլուխ 1-ին պարագագ 1 և 2 գլուխ 2-րդ պարագագ 3, 4, 5, 6, գլուխ 4-րդ պար. 6, բացի գրանից, էջեր 348—349, 357:

Վ. Ի. Լենին.— Դիալեկտիկա, էջ՝ 19—33:

Բ. Ի. Լենին.— Փիլոսոփական տետրադներ, սեղմանության մարդաւինինյան թեորիայի տեսանկյունով:

Գ. Վ. Պլեխանով.— Սоч. т. 18-ый, Предисловие переводчика к брошюре Фр. Энгельса «Людвиг Фейербах».

Մարքս.— Соч. том 3-ый, Язык и мышление.

Թեմա 10-րդ, ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ

1. Հակագրությունների միասնության և պայքարի որենքները

Մատերիալիստական դիալեկտիկայի հիմնական որենքները: Հակագրությունների միասնության և պայքարի որենքը դիալեկտիկայի եյությունն և ու միջուկը: Լենինյան ուսմունքը հակագրությունների միասնության և պայքարի, վորպես որյեկտիվ աշխարհի և նրա իմացության զարգացման որենքի մասին: Զարգացման յերկու հիմնական կոնցեպցիաները: Լենինի և Մտավոնի պայքարը մենշենիկյան գոհնիկի եվոլյուցիոնիզմի (դասակարգերի հաշտության, կապիտալիզմի՝ խաղաղ կերպով սոցիալիզմին անցնելու թեորիաները, «կաղմակերպված կապիտալիզմի» թեորիան և այլն) դեմ: Զարգացման դիալեկտիկական կոնցեպցիան: Լենինը հակագրությունների միասնության հարաբերականության և հակագրությունների պայքարի բացարձակության մասին:

Հակագրությունը վորպես զարգացման ներքին աղբյուրը: Ներքին և արտաքին հակասությունների միասնությունը: Ներքին

Հակասությունների վճռող նշանակությունը՝ Կապիտալիստական յիշկրների զարգացման ներքին և արտաքին հակասությունների ստալինյան վերլուծությունը՝ Դիալեկտիկայի հիմնական որենքին վերաբերող որինակների վերլուծումը. Փիզիկայում—դրական և բացասական ենիկորականություն, ալիքներ և կորպուսկուլներ, այժմյան ուսմունքը միջուկի կառուցվածքի մասին. Բիոլոգիա-յում—ժառանգականություն և փոփոխականություն գոյության պայքարում, փիլիսոփայության մեջ—բացարձակ և հարաբերական հշմարտություն: Որինակներ հասարակական զարգացման բնագավառից. կապիտալիզմի հիմնական հակասությունը, դասակարգեր և դասակարգային պայքար, գյուղացիության յերկվությունը կապիտալիզմի պայմաններում, նեղի յիրկյակի բնույթը և այլն:

Հակասություն և ներհակություն (անտագոնիզմ): Բուռ-ժուազիյի և բանվոր դասակարգի ներհակությունը: Բոլոր դասակարգային շահագործողական հասարակությունների անտագունիստական (ներհակային) բնույթը: Հակասությունների պայքարի բնույթի, հակասությունների ձևերի կոնկրետ պատմական քըննարկումը մատերիալիստական զիալեկտիկայի կարեվորակույն պահանջներ: Ընկեր Ստալինը ներկուսակցական հակասությունների պայքարով հաղթահարելու պրոցեսի՝ վորպես բոլշևիկայան ըստ պայքարով հաղթահարելու որենքի մասին: Լենինի և Ստալինի պայքարը հակասությունները եկեղեկարգության «հաշտեցնելինի գեն: «Միջինը չկա, սկզբունքները հաղթանակում են և վոչ լու» գեն: «Միջինը չկա, սկզբունքները հաղթանակում են և վոչ լու» հաշտվում: (Ստալին):

Դիալեկտիկայի հիմնական որենքի չըմբռնման, այդ որենքը որինակների գումարի վերածելու պիխանովի տեսակետի քըննադատությունը լենինի կողմից: Մեխանիստների կողմից մատերիալիստական դիալեկտիկայի փոխարինումը բուրժուական հավասարակշության թեօրիայով: Հավասարակշության թեօրիայի քննադատությունը ընկեր Ստալինի կողմից: Պայքարը դիալեկտիկայի հիմնական որենքի մեջների բուրժուական աեխանության մեջ: (եներգիայի և շարժման մի ձեի մյուսին անցումը, Մենդելեյևի ելիմենտների աղյուսակը, լույսի կվանտային թեորիան, տեսակների զարգացումը և այլն): Թոփչըները բնույթյան և հասարակության մեջ: Գենետիկայի, սելեկցիայի, և եվլյուոցիոն թեորիայի նորագույն ավանդները, վորոնք ապացուցում են քա-

Վ. Ի. Լենինին.—Դիալեկտիկայի հարցի շուրջը (այս հոդվածը կարելի յե գոտնել մի շարք տեղերում, որինակ՝ 13-րդ հատորի վերջում, Մարքս-Ենգելս-մարքսիզմ գրքում, Ցերկեատորյակում):

Վ. Ի. Լենինին.—Դիալեկտիկա, եջ՝ 38—60:

В. И. Ленин.—Философские тетради, стр. 109, 172, 211, 268:

Բերիա.—Անդրկովկա բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, գլուխ 2-րդ (գիալեկտիկական մեթոդի մասին):

Ստալին.—Լենինիզմի հարցերը. Լենինիզմի պատմական արագածության մատները:

Ստալին.—Խարձյալ սոցիալ-դեմոկրատական թեքման մասին մեր կուսակցության մեջ, գլուխ 1-ին:

Ստալին.—Լենինիզմի հարցերը. Ազգարային քաղաքականության հարցերի շուրջը ԽՍՀՄ-ում, գլուխ 1-ին և 2-րդ:

Ստալին.—Զեկուցում ԽՍՀՄ-ի սահմանադրության նախազօծի մասին, Խորհրդների արտակարգ 8-րդ համագումարում:

Ստալին.—Պատասխան պրոպագանդիստ ընկ. Խվանովին:

Լենին-Ստալին.—Ընտեր յերկեր, յերկու հատորով. հատ. 2-րդ:

2. Քանակից վորակին անցնելու և վորակից քանակին անցնելու որենքը

Վորակը իրի սեաւ գիտակցությունից անկախ գոյություն ունեցող վորոշությունն ե: Շարժման տարեր ձևերի վորակական յուրահատկությունը բնության, հասարակության և մարդկային մտածողության մեջ: Քանակի վորակի և քանակի որյեկտիվությունը: Քանակի և վորակի դիալեկտիկական միասնությունը: Քանակի անցումը վորակին և ընդհակառակը, վորպես դիալեկտիկայի հիմնական որենքներից մեկը: Լենինը թոփչըների մասին: Թոփչքաձև զարգացման ապացույցը ժամանակակից բնագիտության մեջ (եներգիայի և շարժման մի ձեի մյուսին անցումը, Մենդելեյևի ելիմենտների աղյուսակը, լույսի կվանտային թեորիան, տեսակների զարգացումը և այլն): Թոփչըները բնույթյան և հասարակության մեջ: Գենետիկայի, սելեկցիայի, և եվլյուոցիոն թեորիայի նորագույն ավանդները, վորոնք ապացուցում են քա-

Ֆ. Ենգելս.—Բնույթյան դիալեկտիկա, եջ՝ 195, 15—16:

Ֆ. Ենգելս.—Անտերդյուքինդ, եջ՝ 159—165:

նակալան և վորակական փոփոխությունների որենքը։ Պայքար քանակի-վորակի որենքի մենշևիկող իդեալիստական և մեխանիստական աղավաղման դեմ։

Յ. Բացասմանը աշառումի որենք

Բացասմանը բացասումի որենքը վորպես դիալեկտիկայի հիմնական որենքներից մեկը։ Հնից-նորին անցնելու և ցածրից բարձրին անցնելու հեղափոխական պրոցեսը Բացասման որյեկտիվ բնույթը։ Բացասումը վորպի կապի մոմենտ, բացասումը վորպես զարգացման մոմենտ։ Բացասումը «իբր թե վերադարձ գեպի հինը»։ Սկեպտիցիզմի և եկեղեցիզմի քննադատությունը։ Մատերիալիստական դիալեկտիկան ժխտում և մերկ, իզուր բացասումը։ Անհինի պայքարը Միխայլովսկու դիմ տրիադայի հարցում։ Բացասման բացասումի որենքի որինակների վերլուծությունը (գարու հատիկը, համայնական սեփականությունը, փիլիսոփայության զարգացումը և այլն)։

Բացասման բացասումի որենքի կիրառումը Մարքսի «Կապիտալ»ում։ Բացասման բացասումի որենքի կիրառումն ու զարգացումը Լենինի և Ստալինի կողմից դասակարգային պայքարի և սոցիալիստական շինարարության (կոոպերացիայի, կուլտուրայի և այլն) հարցերում։

Բացասման բացասումի որենքի հաստատումը ընագիտության մեջ (հետադարձ շարժումը մեխանիկայի մեջ, որդանիզմի զարգացման մեջ և այլն)։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կ. Մարքս.—Կապիտալ, հատ. 1-ին, գլուխ 24-րդ։

Ֆ. Ենգելս.—Բնության դիալեկտիկա, եջ՝ 195—202, 74—75։

Ֆ. Ենգելս.—Անտի-Դյուրինգ, հատված առաջին, գլուխ 12-րդ, 13-րդ։

Վ. Ի. Լենին.—Դիալեկտիկա, եջ՝ 46—51։

Վ. Ի. Լենին.—Խորհրդային իշխանության հերթական խողիքները (առև Յերկինականությամբ)։

Վ. Ի. Լենին.—Բոլոնիկները կպահեն արդյոք իշխանությունը (նույն տեղում)։

Վ. Ի. Լենին.—Փետություն և հեղափոխություն։

Վ. Ի. Լենին.—Փիլոսոփայում 212, 216, 219։

Վ. Ի. Լենին.—Օ պրոլետարյական կուլտուրայի 409—410։

Վ. Ի. Լենին.—Կարլ Մարքս «Դիալեկտիկա» (առև Լենին՝ Մարքս և նպելը-մարքսիզմ կամ Յերկինատորյակ)։

Լ. Բերիա.—Անդրկովկասի բոլցիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, զլուխ 2-րդ։

Ի. Ստալին.—Ճառ ստախանովականների համամիութենական առաջին խորհրդակցությունում։

Թեմա 11-րդ. ՈՒՍՄԱԽԵՔ ԵՅՈՒԹՅԱՆ ՈՒՅԵՐԵՎՈՒԹՅԹԻ, ԶԵՎԻ ՅԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսմունքն եյության մասին՝ ուսմունք և իրականության ներքին կապերի և մարդկային մտածողության մեջ նրանց արտացոլման մասին։

Եյության և յերկույթի որյեկտիվությունը և միանությունը։ Յերկույթը եյության դրսեվորումն և Հոկասություն եյության և յերկույթի միջև։ Եյության և յերկույթի դարգացումը։ Իմացությունը վորպես յերկույթից—եյության մեջ խորանալու պատճական պրոցես։ Որենք։ Եյությունը և որենքը վորպես մի կարգի հասկացություններ։ Եյության և յերկույթի մշակումը Մարքսի «Կապիտալ»ում (ուսմունք ապրանքային ֆետչիզմի, արժեքի և շուկայի գնի, ճնշտամերի մասին և այլն)։ Եյության և յերկույթի մշակումը Լենինի և Ստալինի կողմից (ուսական հեղափոխության բնույթի և շարժիչ ուժերի, բուրժուական պետության եյության և բուրժուական դեմոկրատիայի եյության, սոցիալիստական պետության եյության, դասակարգային պայքարի եյության և արտահայտման ձևերի, հականեղավորսական տրոցկիզմի և կապիտալիզմի աջ և ենտավրատորների եյության և այլ հարցերում)։

Զեր և բովանդակության միանությունն ու փոխողեցությունը զարգացման ընթացքում։ Բովանդակության վճռող նշանակությունը, ձեր հետ մնալը բովանդակությանից։ Ստալինը հա-

սարտակական կյանքի մատերիական կողմի զարգացումից իդեալան կողմի հետ մասն մասին: Զեթ և բովանդակության զարգացումը: Զեթ և բովանդակության հակասությունը դիարկելու կական զարգացման պրոցեսում վորպես հին ձեռ և նոր բովանդակության հակասություն: Զեթ ակտիվությունը: Զարգացման ձեռփերի բազմակերպությունը: Ենթելար ջերմության զարգացման ձեռփերի, շարժման ձեռփերի մասին:

Զեթի և բովանդակության մշակումը Մարքսի «Կապիտալ»-ում (արտադրողական ուժեր և արտադրական հարաբերություններ, արժեքի ձեռք և այլն): Զեթ և բովանդակության պրոբլեմի բակումը Լենինի և Ստալինի կողմից (1905 թ. հեղափոխության վերլուծումը, գասակարգային պայքարի ձեռքը, ուսմունք ձևով աղջային բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի, պրոլետարիատի դիլտատուրայի ձեռփերի, կոլտնտեսությունների ձեռի և բովանդակության մասին): Պայքար յերևութիւն և երության, ձեռ և բովանդակության ուսմունքի մենշեկող իդեալիստական և մեխանիստական աղավաղութիւնը:

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Կ. Մարքս.—Կապիտալ, հատոր 1-ին, գլուխ 1-ին:
Վ. Ի. Լենին.—Պետության մասին, դասախոսություն կարգացած 1919 թվին Սվերդլովյան համալսարանում:
Վ. Ի. Լենին.—Զեկուցում 1905 թ. հեղափոխության մասին (Յերկասուրյակ):
Վ. Ի. Լենին.—Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն փուլը, 5-րդ գլխի վերջին յերկու յերեսները և 7-րդ գլուխը:

- В. И. Ленин.—Философские тетради, конспект книги Гегеля «Наука логики», отделы, «Явление», «Сущность».
Ի. Ստալին.—Զեկուցում կուսակցության 16-րդ համագումարին, վերջին բաժինը—կուսակցություն և յեզրափակման խոսքը:
Լ. Բերիա.—Անդրկովկասի բոլց. կազմ. պատմ. հարցի շուրջը, գլ. 2-րդ (ձեռ և բովանդակության մասին):
Ի. Ստալին.—Արևելյան ժողովուրդների համալսարանի քաղաքական խնդիրների մասին (տես՝ Մարքսիզմ և աղջային գաղութային հարց):

թեմա 12-րդ. ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ. ՓՈԽԱԶԴՆԵՑՈՒՆ
ԹՅՈՒՆ, ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ. ԱՆՀՐԱԺԵՇՈՒԹՅՈՒՆ:
ՀԱՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ. ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Փոխազդեցություն և պատճառականություն: Պատճառն ու հետեանքը... յերևույթների համաշխարհային փոխազդած կապակցության սումենտներ են: Պատճառի հասկացության սուաջացումը մարդու հասարակական պատմական պրակտիկայի հիման վրա: Պրակտիկան պատճառականության որյեկտիվ ընույթի ապացույցն եւ: Պատճառականության նշանակությունը գիտական իմացության մեջ. Թեկելողիզմի (նպատակաբանության) քննադատությունը: Լենինի պայքարը պատճառականությունը փունկցիոնալ կապի հանդեցնելու մախիստական, իդեալիստական թեորիաների գեմ: Պատճառականության պրոբլեմը այժմյան ֆիզիկայության մեխանիստական ըմբռաման, մեխանիստաների կողմից փիլիսոփայության հիմնական հարցը պատճառականության հարցին հանդեցնելու գեմ:

Անհրաժեշտություն և պատահականություն: Բնության բոլոր յերկույթների զարգացման որինաչափությունը: Պատահականությունը վորպես անհրաժեշտության լրացում և արտահայտման ձեռ: Պատահականության և անհրաժեշտության պրոբլեմը բնագիտության մեջ (որինակ Դարվինի ուսմունքը տեսակների զարգացման մասին): Պատահականության որյեկտիվ ընույթը: Պատահականության աղջեցությունը զարգացման ընթացքի վրա: Մարքսիզմինիզմի պայքարը քատալիզմի գեմ: Լենինն ու Ստալինը անհատի դերի մասին հասարակական զարգացման մեջ: Մեխանիստաների կողմից պատահականության որյեկտիվ բնույթի ժխտումը, մեխանիստաների հանդելը ֆատալիզմին, տառըլերայնության և ինքնահոսի թեօրիային: Աղատությունը վորպես ճանաչված անհրաժեշտություն: Հականեղափոխական տրոցիզմի ավանդուրիզմը և վոլյունտարիզմը:

Հնարավորություն և իրականություն: Ընկեր Ստալինը կուսակցության դերի մասին՝ ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման հնարավորությունը իրականություն դարձնելու գործում: Հիմքի և պայմանի պրոբլեմը դիարկելու կական մատերիալիզմի մեջ: Ընկեր Ստալինը վեց պայմանների, կադրե-

ըի և այլնի մասին: Արյեկոփիվ պայմանները և սուբյեկտիվ ֆակտորը պատմության մեջ: Պայքար հասրավորության և իրականության մեխանիստական նույնացման դեմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆ. Ենգելս. — Բնության դիալիկտիկա, եջ՝ 23—24, 25—26
167—171:

Կ. Մարկս.—Պисьмо к Кугельману от 17/II 1871 года (տես
Маркс и Энгельс, Письма).

Ֆ. Ենգելս.—Անտի-Դյուրինգ, եջ՝ 151—153, 365—371, (հատ-
ված 1-ին, գլ. 11-րդ):

Վ. Ի. Լենին.—Հատ. 13-րդ, պար. 3 և 6:

Վ. Ի. Լենին.—Փիլոսոփական տեսականություն, 155—157, 175—
178.

Ի. Ստալին—ա) Կենտկոմի հաշվեառ զեկուցումը Համե(ը)կ
16-րդ համագումարին, հատված՝ Կուսակցությունը:
ը) Տնտեսավորների խնդիրների մասին:
Դ) Նոր պայմաններ—անտեսական շինարարության
նոր խնդիրներ (այդ բոլորը «Լենինիդմի հարցեր»-ում):
Գ. Վ. Պլեխանով.—Մարքսիզմի հիմնական խնդիրները, գլ.
12-րդ, 15-րդ, 16-րդ:

Թեև ա 13-րդ. ԴիԱլեկտիկո-ՄԱՏԵԲԻԱԼԻՍԱԿԱՆ ՏՐԱՄԱ-
ԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԵՎՈԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՍԴԱ-
ՏՈՒԹՅՈՒՆՆԸ

Դիալիկտիկո-մատեբիլիտական տրամաբանությունը զի-
տություն և վոչ թե մատածողության անբովանդուկ ձևերի մա-
սին, այլ գիտություն և որյեկտիվ աշխարհի և մատածողության
դարձացման որենքների մասին: Իմացության ձևերի բովանդա-
կալից լինելը մարքսիզմի տրամաբանության մեջ:

Զեական տրամաբանություն—մետաֆիզիկական յեղանակի
մատածողության տրամաբանություն և Ենգելսը ձևական տրամա-
բանության զարգացման պատմության մասին: Հասկացու-
թյունների անփոփոխականության մետաֆիզիկական ուսմունքը:
Զեական տրամաբանության հիմնական որենքները: Նույնության
որենքը, հակասության որենքը, յերրորդի բացառման որենքը

Զեական տրամաբանության որենքների լինինյան քննագատու-
թյունը:

Զեական տրամաբանության և դիալիկտիկական տրամաբա-
նության հարաբերակցությունը: Պիեխանոմի հայցքների քննա-
գատությունը այդ հարցում: Պայքար մեխանիստների և մենչե-
կող իդեալիստների դեմ ձևական տրամաբանության և դիալիկ-
տիկական տրամաբանության հարաբերության հարցում:

Ինդուկցիայի և դեգուկցիայի, անալիզի և սինթեզի հակա-
զրումը ձևական տրամաբանության մեջ: Ինդուկցիան և դեգուկ-
ցիան, անալիզը և սինթեզը վորովս անհրաժեշտ մուենտներ
դիլակտիկական մեխանական ճանաչման պրոցեսում դիալիկտի-
կական մատերիալիզմի մեջ:

Ճշմարտության կոնկրետությունը դիտիկտիկական մատե-
րիալիզմի մեջ: Պրակտիկան վերպես ճշմարտության չափանիշ
և առարկայի կապակցության վորոշիչ այն բանի հետ, թե ինչ
և հարկավոր մարդուն, Պիեխանոմի կողմից կոնկրետ անալիզը
վերացական զատողություններով վիխարիներու (որինակ 1905
վերացական զատողությունների հարցում) լինինյան քննագա-
թվի հեղափոխության բնույթի հարցում) լինինյան քննագա-
թությունը: Լինինի և Ստալինի պայքարը և Խոստերնիացիոնալի-
թեորիակիների, արոցկիզմի և բուխարինականության սիոնաս-
տիկայի, գոգմատիզմի, եկեկատիզմի և սոֆիստիկայի գեմ:

Կոնկրետ վերլուծման (անալիզի) որինակներ մարքսիզմ-
ինինիզմի կլասիկների մոտ: Մարքսի մոտ—կապիտալի անալիզ,
Ենգելսի մոտ—մատերիայի տարբեր ձևերի շարժման անալիզ,
Լինինի մոտ—իմպերիալիզմի, իմպերիալիստական և ազգային
ազատագրական պատերազմի անալիզ, բուրժուա-զեմոկրատական
հեղափոխության սոցիալիստականի վերածման, մի յերկրում
սոցիալիզմի հաղթանակի հարցերի անալիզ, Ստալինի մոտ—ուս-
մունք ազգի, բանվոր գասակարգի գիկտատուրայի, անցման
ըջանի հակասությունների մասին և այլ հարցերի անալիզ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆ. Ենգելս.—Բնության դիալիկտիկա, եջ՝ 156—159, 110—111,
14—15, 34—35, 54, 62:

Վ. Ի. Լենին.—Փիլոսոփական տեսականություն, 193—95, 100,
166, 172, 183, 207, 221, 285, 325—328.

Վ. Ի. Լենին.—Հատ. 26-րդ, եջ՝ 179—199:

ի. Սատրին.—Լենինիզմի հարցերը, Լենինիզմի հիմունքների մասին, գլ. Հ-րդ—Մեթոդ:

և. Բերիա.—Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը:

Г. В. Плеханов.—Соч. т. 18-ый, стр. 261—273.

ՀԱՏՎԱԾ IV

Պատմական մատերիալիզմի հիմունքները

Թեմա 14-րդ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԸՄԲԸՆ-ՆՈՒՄԸ ՑԵՎ ԲՈՒԻՇՈՒԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՏԵՐԻ

Մարքսի և Ենգելսի կողմից պատմական հայացքների մեջ կատարած հեղաշրջման եյությունն ու պատմական նշանակությունը: Պատմական մատերիալիզմը—դիալեկտիկական մատերիալիզմի շարունակությունն ու ավարտումն ե, նրա տարածումը մարդկային հասարակության իմացության և նրա պատմության վրա: Պատմական մատերիալիզմի կուսակցականությունը: Իդեալիզմի անբաժան տիրապետությունը պատմական գիտության մեջ Մարքսից և Ենգելսից առաջ:

Նախամարքսյան մատերիալիզմի անհետեղականությունը. ներքեւում մատերիալիզմ, վերևում իդեալիզմ, Մարքսը, Ենգելսը և Լենինը 18-րդ դարի Փրանսիական մատերիալիստների և Ֆոյերբախի՝ պատմության իդեալիստական ըմբռնման մասին: Ուսուղիստների պատմական հայացքները (Սեն Սիմոն, Ֆուրյե, և Ուլեն): Կանարի և Հեգելի իդեալիստական հայացքների քննադատությունը հասարակության վերաբերյալ: Անդրկանան տնտեսագետների (Ա. Սմիտ, Դ. Ռիկարդո) և Փրանսիական բուրժուական պատմաբանների (Մինյե, Թիյերի, Գիզո) հայացքները դասակարգային անատոմիայի և դասակարգային պայմանագրի մասին: Այդ հայացքների բուրժուական սահմանափակությունը:

Պատմական մատերիալիզմ և պատմություն: Պատմական մատերիալիզմը և մյուս հասարակական գիտությունները: Պատմության մատերիալիստական ըմբռնման հիմնական սկզբունքների

թը: Բնության և մարդկային հասարակության զարգացման որինաչափությունը: Նյութական արտագրությունը վորպես հասարակական կյանքի և հասարակության զարգացման հիմք (բազիս): Պետությունը, իրավունքը և հասարակական գիտակցության ձևերը վորպես տնտեսական հիմքի վրա առաջացող վերնաշենքերը: Հասարակական կյանքի գոյը վորոշում և հասարակական գիտակցությունը: Վերնաշենքերի հակադարձ ներգործությունը հասարակության տնտեսական հիմքի վրա:

Դասակարգային պայմանը վորպես հասարակական զարգացման շարժիչ ուժ: Սոցիալական հեղափոխությունը վորպես դասակարգային հասարակական-տնտեսական փորձացիաների փոխակերպման որինք: Թեորիայի և հեղափոխական պրակտիկայի միասնությունը պատմական մատերիալիզմի մեջ: Մարքսիզմ-լենինիզմը անհատի գերի մասին պատմության մեջ: Լենինի-Ստալինի պայմանը Հ-րդ՝ Ինտերնացիոնալի ոպորտունիստաների (Կառլցի, Կունով և ուրիշները) դեմ պատմական մատերիալիզմի հարցերում: Պիեսանովի գերը պատմության մատերիալիստական ըմբռնման մշակման և պոպուլարիզացիայի մեջ: Պիեսանովի սխալները պատմական մատերիալիզմի հարցերում: Պայման պատմական մատերիալիզմի միևնունիստական և մենշևիկով իդեալիստական աղավաղումների դեմ: Պոկրովսկու պատմասիրեալիստի կոնցեպտությունը: Ընկերներ՝ Ստալինը, Ժդանովը, Կիրովը պատմության ուսումնականիրության մասին: Պատմական մատերիալիզմի զարգացումը իմպերիալիզմի, պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի և ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման պրակտիկայի ընդհանրացման միջոցով Լենինի և Ստալինի կողմից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

կ. Մարքս.—Քաղաքատնտեսության քննադատության շուրջը. Առաջաբանը:

կ. Մարքս և Ֆ. Ենգելս.—Կոմունիստական կուսակցության յանիփեստը:

կ. Մարքս և Ֆ. Թիյերի.—Նեմեցկայական իdeologiya (տ. 4-ый) եջ՝ 3—18:

ֆ. Ենգելս.—Լյուդվիկ Փոյերբախ, գլուխ 1-ին և 4-րդ:

Ֆ. Ենգելս.—Ճառ Մարքսի գերեզմանի վրա, 14/III 1883 թ.
Ֆ. Ենգելս.—Անտի-Դյուրինդ, Ընդհանուր գիտողություններ և
հասկած Յ-րդ, գլուխ 1-ին:

Փ. Էնգելս.—Պիսմո Իօսիֆ Բլոխ, օտ 21/IX 1890 ցան
(Մարկս և Էնգելս, Պիսմա).

Վ. Ի. Լենին.—Հատոր 13-րդ, գլուխ 6-րդ, պարագրաֆ 2 և հատ
1-ին, եջ 74—86, 101—103, 382—383, 388—410:

Ի. Ստալին, Ա. Ժուռով, Ա. Կիրով.—Դիտողություններ «ԽՍՀՄ-ի
պատմության» և «Նոր պատմության» կոնսուլտատունների վերաբերյալ:

Ի. Ստալին.—Համերկանի պատմության ուժումնասիրության
շուրջը, (նամակ կուսադատմության գասագրքի
կազմողներին):

Լ. Բերետ.—Անդրկովկասի բուզեփլյան կազմակերպությունների
պատմ. հարցի շուրջը, գլ. 2-րդ:

Գ. Վ. Պլեխանով.—Հատոր 3-րդ, Մոնիստական հայացքի
զարգացման շուրջը պատմության վրա, գլ. 2-րդ,
3-րդ, 5-րդ:

Գ. Վ. Պլեխանով.—Ըօճ. տ. 8-ոյ, Կ վօրուսություն օրու լի-
նություն և առաջարկ առաջարկ առաջարկ:

Գ. Վ. Պլեխանով.—Ըօճ. տ. 18-ը, Սուսանա առաջարկ առաջարկ առաջարկ:

Կառավարական հանձնաժողովի ժյուրիի վորոշումը ԽՍՀՄ պատ-
մության գասագրքի վերաբերյալ:

Թ ե մ ա 15-րդ. ՀԱՍՏԱԿԱԿԱՆ-ՏՏՏԵՍԱԿԱՆ ՑՈՐԾԱՑԻԱ-
ՆԵՐ, ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐ ՅԵԿ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵ-
ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասարակության նյութական արտադրողական ուժերը,
արտադրողական ուժերի տարրերը և նրանց դիալեկտիկական
միասնությունը: Բանվորական ուժի նշանակությունը: Աշխա-
տանքը վորպես նյութական արտադրության հիմք: Նյութական
արտադրությունը վորպես հասարակական կյանքի տնտեսության
հիմք և հասարակական զարգացման հիմք:

Տեխնիկայի և բնագիտության գերը արտադրողական ու-
ժերի զարգացման մեջ: Արտադրական հարաբերությունները

վորպես հասարակության տնտեսական ստրուկտուրա, իրական
հիմք (բաղկա) և վորպես արտադրողական ուժերի զարգացման
ձև: Արտադրական հարաբերությունների դասակարգային բնույթը
դասակարգային հասարակության մեջ:

Արտադրության յեղանակը վորպես բանվորական ուժի և
արտադրության միջոցների միացման յեղանակ: Արտադրա-
յեղանակ և շահագործման յեղանակ: Ասիական, անտիկ, ֆեոդա-
լական և բուրժուական արտադրայեղանակները վորպես պրոդ-
րեսիվ գարաջաններ, դասակարգային հասարակության պատ-
մության մեջ: Կոմունիզմը վորպես ամենաառաջավոր, անդասա-
կարգ հասարակական-տնտեսական ֆորմացիա: Հականեղափոխա-
կան արոցկիւսաների հայացքների քննադատությունը ասիական
արտադրայեղանակի, վորպես հատուկ հասարակական-տնտեսա-
կան ֆորմացիայի մասին:

Հասարակության զարգացումը վորպես բնապատմական
պրոցես: Դասակարգային հասարակական-տնտեսական ֆորմա-
ցիաների (սարկատիրություն, ֆեոդալիզմ, կապիտալիզմ) պատ-
մությունը վորպես գասակտրային կովկ պատմություն: Ար-
տադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների
կոնֆլիկտը, վորպես հիմք անտազոնիտական հասարակական-
տնտեսական ֆորմացիաների հեղափոխական փոխակերպումնե-
տնտեսական բարողների և բարիստինի «առհասարակ հասարակու-
թյան» գերաբերյալ բուրժուական թեորիաների մերկացումը և կո-
նինի կողմից:

Նախնադարյան տոհմատիրական հասարակակարգի արտա-
դրության ուժերը և արտադրական հարաբերությունները,
Տոհմատիրական հասարակակարգը հին հույների, հոռմեյացիների,
գերմանացիների, սլավոնների մոտ: Մարքսը, Ենգելը, Լենինը և
Ստալինը տոհմական հասարակակարգի քայլացման և դասակար-
գային հասարակության ու շահագործման առաջացման պատճառ-
ների մասին:

Մարկությունը վորպես հասարակության դասակարգերի
պատճառման առաջին ձևը: Մարկատիրական հասա-
րական պատճառման առաջին ձևը: Հասմուլ: Մարկա-
րակարգի կասմիկ ձևը հին Հռոմեատանում և Հասմուլ: Մարկա-
րակարգի արբության զարգացման յուրահատկությունը հին արևելյան
դիցության (Բաբելոն, Ասորեստան, Յեզիրա): Մարկա-
րակարգությաներում (Բաբելոն, Ասորեստան, Յեզիրա):

տիրական հասարակության կործանումը ստրուկների հեղափոխության հետևանքով:

Ֆեոդալիզմի ծագումը, Շահագործման ֆեոդալական ձևերը՝ Ֆեոդալիզմի արտադրողական ուժերը և արտադրական հարաբերությունները: Ֆեոդալիզմի զարգացման յուրահատկությունը Արևմտյան Ֆեոդալիզմը, Արևելքում (Ասիա) և Ռուսաստանում: Դյուլի տիրապետությունը քաղաքի վրա ֆեոդալիզմի ժամանակ: Կապիտալիստական արտադրայեղանակի առաջացումը ֆեոդալիզմի ներսում: Ֆեոդալիզմի հիմնական հակասությունները և նրա կործանման պատճառները: Ճորտ գյուղացիների հեղափոխությունը և ճորտատերերի ու շահագործման ճորտատիրական ձևերի վոչչացումը, կապիտալիստների ու կալվածատերերի իշխանության, շահագործման կապիտալիստական և կալվածատիրական ձևերի հաստատումը:

Մարքը նախնական կապիտալիստական կուտակման մասին: Արդյունաբերական հեղաշրջումն Անգլիայում և բուրժուական հեղափոխությունը Թրանսիսիայում (18-րդ դար): Կապիտալիստական արտադրայեղանակի հիմնական հակասությունը՝ Բուրժուազիայի և պրոլետարիատի անտագոնիզմը վորպես այդ հակասության արտահայտություն: Անսարիսիան, մրցումը և ճգնաժամերը վորպես կապիտալիզմի զարգացման որենք: Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի բարձրագույն և վերջին փուլ վորպես սոցիալիստական հեղափոխության նախորյակ: Կապիտալիստական արտադրահարաբերությունների՝ արտադրողական ուժերի զարգացման կապանք դառնալը: Իմպերիալիզմի զարացրջանում կապիտալիզմի տնտեսական և քաղաքական անհամաչափ զարգացման որենքի հայտնաբործումն ու հիմնավորումը կենինի և Ստալինի կողմէց: Կենինիզմի ուսմունքը մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին: Պրոլետարական հեղափոխությունը վորպես կապիտալիզմի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հակասությունների լուծում:

Կենինի և Ստալինի պայքարը «արտադրողական ուժերի» մեջկեցան թեորիայի դեմ: Պիետանովի սխալների քննադատությունը: Կառուցկու ուժարարական մասնակիությունը: Կապիտալիզմի մեջ կապիտալիզմի խաղաղագումիքը «ներաճման» թեորիաների մեջկեցումը: Կապիտալիզմի

ավտոմատիկ կործանման ոռղաշլյուքսիմբուրդյան թեորիայի քննադատությունը: Հակահեղափոխական տրոցկիստական ստագուացիայի թեորիայի մերկացումը: Բուխարինի հավասարակշռության բուրժուական թեորիայի քննադատությունը: Պայքար արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ուսմունքի՝ մեխանիսմների և մենշեկիլող իդեալիստների աղավազման դեմ:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը և բոլոր ու ամեն տեսակի շահագործողների ու շահագործման վերացման խնդիրը: Պրոլետարիատի դիկտատուրան վորպես դասակարգերի և շահագործման վոչչացման, սոցիալիզմի կառուցման դործիք:

Կապիտալիզմից կոմունիզմի անցման շրջանը: Սոցիալիստական արտադրայեղանակի դարգացումը: Անցման շրջանի եկոնոմիկայի բազմաձևության հաղթանարումը: Խորհրդային եկոնոմիկայի և ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման պահանջին բնույթը: Յերկրի սոցիալիստական ինդուստրացումը, գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Գյուղատնտեսական աշխատանքի վերածումը ինդուստրիալ աշխատանքի այլատեսակության: Արտադրողական ուժերի բարձրացնման սոցիալիստական սկզբունքը ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ-ի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների սոցիալիստական բնույթը:

Ստալինը տեխնիկայի յուրացման և կազմերի գերի մասին սոցիալիզմի շրջանում:

Լենինն ու Ստալինը աշխատանքի արտադրողականության զարգացման՝ վորպես սոցիալիզմի հաղթանակը վճռող պայմանի մասին: Աշխատանքի սոցիալիստական ձևերը: Սոցմրցումը, ստախանովյան շարժումը, վորպես սոցիալիզմից կոմունիզմի անցման պայմանների նախապատրաստում: Սոցիալիզմի անվերագարձ հաղթանակը ԽՍՀՄ-ում: Շահագործող գասակարգերի վերացումը և կոմունիզմի առաջին փուլի կառուցումը: Յերկու սիստեմների՝ կապիտալիզմի և սոցիալիզմի պայքարը ներկա հտապում, Բնկեր Ստալինը կապիտալիստական շրջապատի և ԽՍՀՄ-ի միջազգային դրության մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- կ. Մարքս.—Կապիտալ, համոր 1-ին, գլուխ 5-րդ, պար. 1,
գլուխ 24-րդ:
- կ. Մարքս.—Վարձու աշխատանք և կապիտալ:
- կ. Մարքս և Ֆ. Ենգելս.—Կոմունիստական կուսակցության
մանիֆեստը:
- Ֆ. Ենգելս.—Աշխատանքի գերը կապկի մարդացման պրոցե-
սում (առև Բնության գիտեկտիկա):
- Ֆ. Ենգելս.—Բնուանիքի, մասնավոր սեփականության և պե-
տության ծագումը:
- Կ. Մարքս և Ֆ. Էնգելս.—Պисьма, Պисьмо Маркса к
П. В. Анненкову от 28/XII 1846 г. Письмо Эн-
гельса к Штаркенбургу от 25/I 1894 г.
- В. И. Ленин.—Замечания на книгу Бухарина, «Экономи-
ка переходного периода». Ленинский сборник
11-ый.
- Դ. Ինքնին.—Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի բարձրա-
գույն գործ գլ. 7-րդ:
- Դ. Ինքնին.—Եկոնոմիկան և քաղաքականությունը պրոլե-
տարիտատի զիկտատուրայի գարաջանում, (առև
Ցերկնատորյակ):
- Ի. Ստալին.—Լենինիզմի հարցերը. Լենինիզմի հիմունքների
մասին, գլուխ 2-րդ և 3-րդ. Տնտեսավարների խնդիր-
ների մասին:
- Ի. Ստալին.—Ճառ Կրեմլում Կարմիր բանակի ակազեմիկ-
ների ավարտման առթիվ, 1935 թիվ մայիսի 4:
- Ի. Ստալին.—Ճառ ստախանովականների համամիութենական
առաջին խորհրդակցությունում:
- Ի. Ստալին.—ԽՍՀՄ-ի Սահմանադրության նախագծի մասին.
զեկուցում՝ Խորհուրդների 8-րդ համամիութենական
արտակարգ համագումարում, 25 նոյեմբերի 1936
թիվ:
- Ի. Ստալին.—Կուսակցական աշխատանքի թերությունների
և արոցկիստական ու այլ յերկերեսանիների վերաց-
ման միջոցառումների մասին, գլուխ 2-րդ և 5-րդ:

ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը, գլուխ 1-ին:
Դ. Վ. Պլեխանով.—Մարքսիզմի հիմնական հարցերը, գլուխ
7-րդ:

Թեմա 16-րդ. ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՅԵԿ ԴԱՍԱ-
ԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Բուրժուական ուսմունքները դասակարգերի և դասակար-
գյին պայքարի մասին: Դասակարգերի և դասակարգյին
պայքարի հարցում նորն ու վճռողականը Մարքսի ուսմունքի մեջ:

Դասակարգերի լենինյան սահմանումը (վորոշումը): Նա-
խադասակարգյին նախնադարյան կոմունիստական հասարա-
կությունը, նրա անսեսական ու սոցիալական հիմունքները:
Արտադրության գործիքների և միջոցների նկատմամբ մասնա-
վոր սեփականության ծագումը և դասակարգերի ու պետության
առաջացումը: Դասակարգերի ծագման հարցում Դյուրինգի և
Կառուցկով՝ բոնության թեորիայի քննադատությունը, բաշխման
թեորիայի, Բոգդանովի և Բուխարինի կազմակերպական-տեխնի-
կական թեորիայի, սոցիալական գարվինիզմին այլ թեորիաների
քննադատությունը:

Դասակարգերի առաջացումը հին չունաստանում ու Հոռո-
մում: Ստրկատիրական հասարակության հիմնական դասակար-
գերը Ստրուկներ և ստրկատերեր: Արիստոկրատներ և զերու
(չունաստանում), պատրիկներ և պլեբեյներ (Հոռմում): Դասա-
կարգյին պայքարը ստրկատիրական հասարակության մեջ
(ստրուկների ապստամբությունը Սիցիլիայում, Սպարտակի
ապստամբությունը):

Ֆեոդալական հասարակության հիմնական դասակարգե-
րը, Դասակարգյին պայքարը ֆեոդալիզմի գարաջանում:
Գյուղացիական կոմիսերը և ձնշված ժողովուրդների ապստամ-
բությունները Ռուսաստանում 17—18-րդ դարերում:

Բուրժուազիան և պրոլետարիատը վորպես կապիտալիստա-
կան հասարակության հիմնական դասակարգեր: Ընկեր Ստալինը
նախահեղափոխական Ռուսաստանում՝ ինչպես նոր, կապիտա-
լիստական առումով ժամանակակից դասակարգերի, նույնպես և
հին նախակապիտալիստական դասակարգերի առկայության
մասին:

Թր. Դիալ. և պատմ., մատեր. — 4

Գյուղացիությունն ու ինտելիգենցիան կապիտալիզմի պայմաններում:

Բանվոր դասակարգի զարգացումը «դասակարգն իր միջից» վորակես «դասակարգ իր համար»:

Մարքսը և Ենգելսը պրոլետարիատի դասակարգային պայքարի մասին Պրոլետարիատի դասակարգային պայքարի հիմնական ձևերը. անտեսական, քաղաքական, թերետիկական: Պայքարի քաղաքական ձևի գերիշխող դերը: Ամեն մի դասակարգային պայքարը քաղաքական պայքարը և Հեղափոխական թեուրիայի նշանակությունը պրոլետարիատի դասակարգային պայքարում: Ենինը տարրերայնության գիտակցականության մասին պրոլետարիատի դասակարգային պայքարի մեջ: Պրոլետարիատի հեգեմոնյան հեղափոխության մեջ: Կոմունիստական կուսակցությունը վորպես պրոլետարիատի առաջտվոր ջոկատ: Կուսակցություն—դասակարգ—մասսա: Առաջնորդների դերը պրոլետարիատի դասակարգային պայքարում:

Պրոլետարիատի դասակարգային պայքարը բուրժուազիայի դեմ իմպերիալիզմի դարսաշրջանում: Ոպորտունիզմի արմատները բանվորական շարժման մեջ: Անտերնացիոնալի առաջնորդների դավաճանական գերը: Դասակարգային պայքար և աղքային գաղութային շարժում: Պրոլետարիատի դասակարգային պայքարը ֆաշիզմի դեմ: Ֆաշիստական ռասայական «թեորիաների» իմպերիալիստական եյության մերկացումը: Միասնական պրոլետարական և ժողովրդական հակաֆաշիստական ձակատ:

Պրոլետարիատի գիտառուրան վորպես դասակարգային պայքարի շարունակությունը նոր ձևերով: Ենինը դասակարգային պայքարի նոր ձևերի և խնդիրների մասին պրոլետարիատի գիտառուրայի ժամանակաշրջանում: Պրոլետարիատը և գյուղացիությունը վորպես անցման շրջանի հիմնական դասակարգերը: Պայքարը մենչեւկող իդեալիստական, տրոցկիստական հայցքների դեմ անցման շրջանի դասակարգերի, դասակարգային պայքարի հարցում: Կուսակցության յերեք հիմնական լողունքները գյուղացիության հարցում: Դասակարգային պայքարի առանձնահատկությունները ուսղմական կոմունիզմի և վերականգնման շրջանում:

Դասակարգային պայքարի որումը վերակառուցման շրջա-

նում: Վնասարարություն բուրժուական ինտելիգենցիայի վերախափերի կողմից (Շախտիի գործը): Դասակարգային պայքարի սրումը ԽՍՀՄ-ում ամբողջ ձակատով սոցիալիստական ծավալուն հարձակման կապակցությամբ: Գյուղացիության՝ սոցիալիստական ուղղության համաշխարհային-պատմական նշանակությունը և կուսակցության գծի հաղթանակը կոլխոզային շինարարության մեջ: Կուլակության վորպես դասակարգի վերացումը համատարած կոլխոզիվացման հիմնան վրա: Դասակարգային թշնամու դիմազդության սրումը և կուլակային սաբուտաժի ջախջախումը: Դասակարգային պայքարի մարման և սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման բուխարինյան հականեղափոխական ուստավատորական թեորիան: Հականեղափոխական տրոցկիզմի և աջ ոպորտունիզմի՝ վորպես դասակարգային թշնամու գործակալների ջախջախումը: Շահագործողական դասակարգերի վերացումը և մարդու կողմից մարդու շնհագործման վոչնչացումը:

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ-ն քաղաքի և գյուղի ազատ աշխատավորների հասարակություն և: Բանվոր դասակարգը գյուղացիությունը, ինտելիգենցիան և նրանց տարբերությունների ջնջելը: Դասակարգային պայքարը սոցիալիզմի շինարարության ներկա ետապում:

Ճապոնա-գերման-տրոցկիստական լրտեսների, վիվերանուների, վնասարարների և մարդասպանների ջախջախումը: ԽՍՀՄ-ի կապիտալիստական շրջապատը: Զախջախված դասակարգային թշնամիների մնացորդներին՝ ԽՍՀՄ-ի արտասահմանյան թշնամիների կողմից անմիջական տջտկցություն ցույց տրվելը: Դասակարգային պայքարի մարման նեխված և վտանգավոր թեուրիաների մերկացումը ընկեր Ստալինի կողմից:

Ընկեր Ստալինը ջաջախված շահագործող դասակարգերի մասցորդների դեմ մղվելիք պայքարի խնդիրների, հեղափոխական զգոնության բարձրացման և բանվոր դասակարգի գիտառուրան բոլոր միջոցներով ամրապնդելու անհրաժեշտության մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կ. Մարքս և Ֆ. Ենգելս.—Կոմունիստական կուսակցության մանիքնեատը:

Կ. Մարքս և Ֆ. Էնգելս.—Պисьма (т. т. 19-ый—27-ой),
Письмо Маркса к Вейдемейеру от 5/III 1852 г.

մ. Ենդելս.—Հնտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը:

մ. Ենդելս.—Անտի-Դյուլինդ, հատված յերկրորդ, Բոնության թեորիա, գլուխ 2-րդ և 4-րդ:

վ. Ի. Լենին.—Տարածայնություններ յեզրոպական բանվարկան շարժման մեջ (տես Լենին՝ Մարքս-Ենգելմարքսիդ կամ Յերկհատորյակ):

վ. Ի. Լենին.—Իմպերիալիզմի և սոցիալիզմի պառակտումը (Соч. т. 19-ը և այլ.):

վ. Ի. Լենին.—Մեծ նախաձեռնություն (տես Յերկհատորյակ):

վ. Ի. Լենին.—Դասակարգային պայքարի լիբերալ և մարքսիստական հասկացության մասին (նույն տեղը):

վ. Ի. Լենին.—Պրոլետարիատի դիկտատորայի մասին (նույն տեղը):

վ. Ի. Լենին.—Ճառ տրանսպորտային բանվորների համառուսական համագումարում, մարտի 27 1921 թիվ, հատ. 26-րդ:

վ. Ի. Լենին.—Պետության մասին, Դասախոսություն կարդացած Սվերդլովի համալսարանում, 11 հուլիսի 1919 թվին:

ի. Ստալին.—Լենինիզմի հարցերը, Լենինիզմի հիմունքների մասին, գլուխ 3-րդ—Թեորիա, գլուխ 8-րդ, —Կուսակցություն:

ի. Ստալին.—Կուսակցության յիրեք հիմնական լոգունգների մասին գյուղացիության հարցում, Աջ թեքժան մասին Համկ(բ)կ-ի շարքերում, Գյուղի աշխատանքի մասին (այդ բոլորը տես Լենինիզմի հարցերում):

ի. Ստալին.—ԽՍՀՄ-ի Սահմանադրության նախագծի մասին, ղեկուցում Խորհուրդների արտակարգ 8-րդ համամիութենական համագումարում, նոյեմբերի 25-ին 1936 թիվ:

ի. Ստալին.—Կուսակցական աշխատանքի թերությունների և արոցիստական ու այլ յերկերեսանիների վերացման միջոցառումների մասին, Զեկուցում և յեզրափակման խոսք Համկ(բ)կ կենտկոմի պլենում 3—5 մարտ 1937 թիվ:

ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը:

Գ. Դիմիտրով, —Զեկուցում կոմինտերնի 7-րդ կոնգրեսում:

Թեմա 17-րդ, ՊեՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎՀԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԴԻԿՏԱՏՈՐԻԱ:

Պետության առաջացման սոցիալ-տնտեսական հիմունքները, Պետությունը առաջացրում էին Հունատանում և Հոռոմում: Պետությունը դաստկարգային հակասությունների անհաշտելիության հետևանքում արտահայտություն և ճնշման ապարատ տիրող դաստկարգի ձեռքին: Շահագործողական պետության բռնության որդանները բանակ, վոստիկանություն, զատարան, բանտ, յեկեղեցի, զարոց, մամուլ: Շահագործողական պետության հիմնական պատմական տիպերը: Պետության տիպերի փոփոխությունը արտադրայեղանակների զարգացման և փոփոխության հետևանքով: Լենինը դաստկարգային հասարակության մեջ կառավարման ձեռքի փոփոխման և պիտության շահագործողական հյության պահպանման մասին: Բուրժուական գեմոլիրատիան վորպես բուրժուազիայի դիկտատուրայի ձև: Պետության վերդասակարգայնության և մաքուր գեմոլիրատիայի բուրժուական թերիքաների քննադատությունը:

Բուրժուական պիտությունը և բուրժուական գեմոլիրատիան մինչ մոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանում և իմպերիալիզմի շրջանում: Ֆաշիզմը վորպես մոնոպոլիստական կապիտալի դիկտատուրայի բացահայտ տեսողիստական նախագահությունը: Ֆաշիզմը վերաբերյալ ֆաշիստական «թեորիաների» քննադատությունը: Փողովրդական հակաֆաշիստական և միասնական պրոլետարական նախատի: Միասնական ճակատի կառավարություն: Իշխանության հարցը ամեն ոի հեղափոխության արմատական հարցը: Կեղափոխության պատմական տիպերը: Ստրուկների հեղափոխությունը (Սպարտակի ազգամբությունը, ստրուկների ազգամբությունը 2-րդ և 3-րդ դարերում), ճորակեր հեղափոխությունը—գյուղացիական պատերազմը Գլուխանիայում 16-րդ դարում: Խազինի կոխիվը բոյարների և կալվածատերների վեմ (1670): Պուգաչովի գյուղացիական պատերազմը (1773): Բուրժուական հեղափոխություններն Անգլիայում (17-րդ դարում), Ֆրանսիայում (1789 թ.): Առաջին և յերկրորդ բուրժուական հեղափոխությունները Բուրժուատանում:

Լինինը և Ստալինը պրոլետարական հեղափոխության և
բուրժուական հեղափոխության արմատական տարբերության մաս-
սին: Մարքս-լինինյան ուսմունքը բուրժուա-դեմոկրատական
հեղափոխության պրոլետարականի վերաճման վերաբերյալ: Սու-
բյեկտիվ Փակառի գերը հեղափոխության մեջ: Լինինի և Ստա-
լինի ուսմունքը հեղափոխտկան ձգնաժամի և հեղափոխտկան սի-
տուացիայի մասին: Մարքսը, Ենգելսը, Լինինը և Ստալինը ապրո-
տամբության վրապես արվեստի մասին:

Մարքսի ուսմունքը անընդհատ հեղափոխության մասին:
Լինինի և Ստալինի պայքարը պերմանենա հեղափոխության
Տրոցկու հականեղափոխտկան թեորիայի վեմ: Կառցկու ուլտրա-
իմպերիալիզմի թեորիայի և սոցիալիզմի մեջ կապիտալիզմի խաղաղ
ներանձնան թեորիայի ու հեղափոխության ֆազերի բուխարինյան
թեորիայի քննադատությունը: Հեղափոխության մեջ պրոլետա-
րիատի հեգեմոնիան—պրոլետարիատի գիշատուրային անցնելու
աստիճանն և նրա սաղմը: Մարքսը, Ենգելսը, Լինինը և Ստալինը
Փարիզյան կոմունայի մասին: Լինինն ու Ստալինը իմպերիա-
լիզմի դարաշրջանում կապիտալիզմի անհամաչափ զարգացման
որևէնքի և մի յիրկում սոցիալիզմի հաղթանակի հնարավորու-
թյան մասին: Իմպերիալիզմի շղթայի հեղքի լինինյան ուսմուն-
քը: Կոմինտերնը իմպերիալիզմի դարաշրջանի հեղափոխության
տիպերի մասին: Պրոլետարական հեղափոխության շարժիչ ուժե-
քը և ուղերժները: Կոմունիստական կուսակցության գերը բուր-
ժուա-դեմոկրատական և պրոլետարական հեղափոխության մեջ:
Բուրժուական պետական մեջենայի ջախջախման անհրաժեշտու-
թյունը: Մարքսի, Լինինի, Ստալինի պայքարը անարխիստնե-
րի գեմ պետության հարցում: Լինինի պայքարը Բուխարինի
գեմ պետության հարցում:

Պրոլետարիատի գիշատուրան վորպես պրոլետարական հե-
ղափոխության հիմնական բովանդակություն: Հոկտեմբերյան
Մեծ սոցիալիստական հեղափոխությունը վորպես համաշխարհա-
յին հեղափոխության սկիզբն ու նախադրյալը: Պրոլետարիատի
գիշատուրան դասակարգային պայքարի շարունակությունն ե'
նոր ձևերով: Պրոլետարիատի գիշատուրան պրոլետարիատի և
աշխատավոր մասաների դաշնքի հատուկ ձեռ և պրոլետարիա-
տի դեկավարությամբ:

Պրոլետարիատի գիշատուրայի մեխանիզմը և շարժաբեր
փոկերը: ՀԱՄԿ (բ) և վորպես պրոլետարիատի գիշատուրայի
դեկավար ուժ:

Պրոլետարական պետությունը վորպես դասակարգերի վոչըն-
չացման գործիք: Պրոլետարիատի գիշատուրայի յերեք կողմե-
րը: Խորհուրդները վորպես պրոլետարիատի գիշատուրայի պե-
տական ձեւ: Բանվոր դասակարգի դիկտատուրայի ամրապնդման
խնդիրները հեղափոխության տարբեր ետապներում և սոցիա-
լիզմի շրջանում: Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ-ի հա-
սարակական և պետական կտուցվածքի մասին: Խորհրդային
պետությունը վորպես օնմենագետությամբ պետությունն աշխար-
հում: Ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքը
գաղտնի քվեարկությամբ և հետևողական սոցիալիստական գե-
մովրատիզմի կենսագործումը ԽՍՀՄ-ում: Բանվոր դասակարգի
գիշատուրայի բազայի լայնացումը: Ստալինյան Սահմանադրու-
թյան միջազգային նշանակությունը: Գետությունը սոցիալիզմի
ժամանակ և նրա հիմնական ինդիրները: Խորհրդային իշխանու-
թյունը վորպես բազմազդային պետություն: Պայքար նացիոնա-
լիզմի, ուսասայական և ազգային ատելության ու արհամարտների
գեմ:

Պետության մահացման սոցիալ-տնտեսական նախադրյալ-
ները կոմունիզմի բարձր փուլում: Պետության մահացման հա-
կամարքսիստական հականեղափոխտկան թեորիաների քննադա-
տությունը:

Բանվոր դասակարգի գիշատատուրայի ամրապնդման խնդիր-
ները և պայքար ֆաշիզմի գործակալների, հականեղափոխտկան
արոցկիստների ու կապիտալիզմի աջ ուստավրատորների և բուր-
ժուական նացիոնալիստների գեմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- կ. Մարքս և Ֆ. Ենգելս.—Կոմունիստական կուսակցության
մանիֆեստը:
- կ. Մարքս.—Քաղաքացիական կոիվը Ֆրանսիայում:
- կ. Մարքս.—Գոթայի ծրագրի քննադատությունը:
- Ֆ. Ենգելս.—Ընտանիքի, մասնավոր սեփականության և պե-
տության ծագումը:

Վ. Ի. Լենին.—Յեղագույնի միացյալ նահանգների լուղունդի
մասին (տես Լենին-Ստալին, Յերկատորյակ)։

Վ. Ի. Լենին.—Պետություն և հեղափոխություն։

Վ. Ի. Լենին.—Պետության մասին, դասախոսություն կարգացած
Սվերդլովի համալսարանում, հունիսի 11-ին 1919 թիվ։

Վ. Ի. Լենին.—Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ
կառուցկին։

Վ. Ի. Լենին.—Թեղեր և զեկուցում բուրժուական գեմոկրատի-
այի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին Կո-
մինտերինի 1-ին կոնգրեսում, մարտի 4-ին 1919 թիվ։

Ի. Ստալին.—Լենինիզմի հարցերը։ Լենինիզմի հիմունքների
մասին, գլուխ 4-րդ—Պրոլետարիատի դիկտատուրա:
Գլուխ 8-րդ—Կուսակցություն, Գլուխ 7-րդ—Սորտաե-
դիա և տակտիկա։

Ի. Ստալին.—Լենինիզմի հարցերի շուրջը. գլուխ 3—7-րդ։

Ի. Ստալին.—Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական
կոմունիստների տակտիկան։ Հոկտեմբերյան հեղափո-
խության միջազգային բնույթը։

Ի. Ստալին.—Ճառ կոլխոզնիկ-հարվածայինների համամիու-
թենական առաջին համագումարում։

Զրույց անդիմական գրող՝ Ուելսի հետ։ Զրույց ամերիկան լրա-
գըրային միավորան նախագահ Գ. Ռոյ-Հովլարդի հետ։

Ի. Ստալին.—ԽՍՀՄ-ի Սահմանադրության նախագծի մասին։
Զեկուցում Խորհուրդների 8-րդ համամիութենական
արտակարգ համագումարում 25-ի նոյեմբերի 1936թիվ։

ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը։

ԽՍՀՄ-ի Գերազույն Խորհրդի ընտրության կանոնադրությունը։

Ի. Ստալին.—Կուսակցական աշխատանքի թերությունների և
արոցինատական ու այլ յերկերեսանիների վերացման
միջոցառումների մասին։ Զեկուցում և յեղափակման
խոսք ՀԱՄԿ (բ) Կ. Կենտկոմի պլենումում 3-ին մար-
տի 1937 թ։

Լ. Բերիա.—Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների
պատմության հարցի շուրջը։

Կոմունիստական ինտերնացիոնալի ծրագիրը։

Թեմա 18-րդ. Հիմք ՅԵՎ ՎԵՐՆԱՇԵՆՔԵՐ. ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԳԻ-
ՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԸ

Հասարակության տնտեսական հիմքը (բաղիսը). քաղաքա-
կան և իրավական վերնաշենքեր (պետություն, իրավունք): Գա-
ղափարախոսական վերնաշենքեր (գիտություն, կրոն, բարոյա-
կանություն, փիլիսոփայություն, արքեստ): Վերնաշենքերի զար-
գացման հարաբերական ինքնուրույնությունը։ Հիմքի և վերնաշեն-
քերի փոխազդեցությունը։ Վերնաշենքերի դասակարգային բնույ-
թը դասակարգային հասարակությունների մեջ։ Վերնաշենքերի
զարգացումը անցման շրջանում և սոցիալիզմի դարաշրջանում։
Վերնաշենքերի հակաղարձ ազգեցությունը հիմքի վրա։ Հիմքի
և վերնաշենքերի հարաբերակցության պիեխանովյան սխեմայի
(հինգանգամանու) քննադատությունը։

Իրավունքը տիրող դասակարգի՝ որենք դարձված կամքն և,
վորն արտահայտում ե տնտեսական հարաբերությունները։ Սար-
կագիրական, ֆեոդալական և բուրժուական հասարակության ի-
րավունքը և նրա դասակարգային բնույթը։ Խորհրդային սոցիա-
լիստական իրավունքը։ ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրությու-
նը և ընտրական իրավունքի սիստեմը։ Մարքսը, Լենինը և Ստա-
լինը սոցիալիզմի ժամանակ «բուրժուական իրավունքի նեղ հո-
րիզոնի» հաղթահարման մասին։

Մարքս-լենինյան արտացոլման թեորիան վորպես հասա-
րակական գիտակցության վերաբերյալ ուսմունքի հիմքը։ Հա-
սարակական գիտակցությունը վորպես հասարակական գոյի ար-
տաշորում։ Գիտակցության առաջացումն ու զարգացումը Են-
գելը աշխատանքի վերի մասին մտածողության և լեզվի զար-
գացման մեջ։ Գիտական և կրոնական գիտակցություն։ Գաղա-
փարախոսության բողոքանովյան և բուխարինյան աղափաղութիւնի
քննադատությունը։ Տիրապետող գաղափարները տիրող դասա-
կարգի գաղափարներն են։ Գաղափարախոսական պայքարը վորպես
դասակարգային պայքարի ձևերից մեկը։

Մարկատիրական հասարակության գաղափարախոսությու-
նը Հին հունական առասպելաբանությունը (միթոլոգիա), գիտու-
թյունը և փիլիսոփայությունը վորպես ստրկատիրական կարգե-
րի արտաշորում։

Ֆեոդալական հասարակության գաղափարախոսությունը:
Կըոնը վորպես ֆեոդալիզմի գաղափարախոսության տիրապետող
ձև:

Բուրժուական գաղափարախոսության ծագումն ու զարգացումը ֆեոդալիզմի և ֆեոդալական գաղափարախոսության ու կրոնի գեմ բուրժուազիայի մղած պայքարի պրոցեսում: Ֆրանսիական մատերիալիզմի և աթեիզմի, անգլիական քաղաքատնտեսության առաջադիմական (պրոգրեսիվ) դերը: Բուրժուազիայի գաղափարախոսության ռեակցիոն բնույթը իմպերիալիզմի դարաշրջանում: Ռասասայականությունը, միստիկան, գաղանային շովինիզմը, խավարամոլությունը վորպես Փաշիզմի գաղափարախոսության բովանդակություն:

Պրոլետարիատի գաղափարախոսության արմատական տարրերությունը նախորդ ճնշված դասակարգերի (սարուկների և ճորտերի) գաղափարախոսությունից: Մարքսիզմ-լենինիզմը վորպես բանվոր դասակարգի արմատական շահերի գիտական արտահայտություն: Բանվորական շարժման տարերայնության գաղափարախոսության քննադատությունը լենինի և Ստալինի կողմից: «Պոչականության» («ԽՈԾՏԻՅՄ») գաղափարախոսությունը — «ամեն մի ոպրտունիզմի գաղափարական հիմքն ե» (Ստալին): Լենինն ու Ստալինը տարերային բանվորական շարժման մեջ գիտակցականություն մտցնելու մասին: Կոմունիստական կուսակցության և հեղափոխական թեորիայի դերը: Աշխատավորների սոցիալիստական գիտակցության զարգացումը բանվոր դասակարգի դիկտատուրայի պայմաններում: Ստալինը մարդկանց տնտեսական դրությունից՝ նրանց գիտակցության յետ մնալու և եկոնոմիկայից ու մարդկանց գիտակցությունից կապիտալիզմի մնացուկները վերացնելու մասին: Սոցիալիզմի հաղթանակը և կոմունիստական գիտակցության մասսայական զարգացումը: Պայքար մարքսիզմ-լենինիզմի մեխանիստական և մենշեկող իշտալիստական աղավաղումների գեմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

